

**Հարցաթերթ**  
**Աշխարհագրություն առարկայի 2020թ. դպրոցական օլիմպիադայի**  
**հանրապետական փուլի**  
**/տևողությունը՝ 150 րոպե/**  
**(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)**  
**11-12-րդ դասարաններ**

1. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ-----1,5 միավոր
1. Լեռնաշխարհի հյուսիսում, հունիսի 22-ին գիշերվա տևողությունն ավելի երկար է, քան հյուսիսային բևեռում:
  2. Միջնաշխարհում արևափայլի տևողությունն ավելի մեծ է, քան եզրային լեռնաշղթաների արտաքին լանջերին:
  3. Լեռնաշխարհի հարավում, մարտի 21-ին գիշերվա տևողությունն ավելի կարճ է, քան լեռնաշխարհի հյուսիսում:
  4. Լեռնաշխարհի հարավում, հունիսի 22-ին ցերեկվա տևողությունն ավելի երկար է, քան հյուսիսային բևեռում:
  5. Լեռնաշխարհի հարավում, դեկտեմբերի 22-ին գիշերվա տևողությունն ավելի երկար է, քան հարավային բևեռում:
  6. Լեռնաշխարհի հյուսիսում, դեկտեմբերի 22-ին ցերեկվա տևողությունն ավելի երկար է, քան լեռնաշխարհի հարավում:
2. Ի՞նչ են Էմիգրացիան, իմիգրացիան և ռեեմիգրացիան: Գրե՛ք նաև դրանց հայերեն հոմանիշները-----1,5 միավոր
3. Վրաստանի Հանրապետության տարածքը զբաղեցնում է 69,7 հազ. կմ<sup>2</sup>, իսկ ՀՀ-ի տարածքը՝ 29,8 հազ. կմ<sup>2</sup>: Որքա՞ն մակերես կզբաղեցնի Վրաստանի Հանրապետությունը 1 : 1 000 000 մասշտաբի քարտեզում: Որքա՞ն մակերես կզբաղեցնի ՀՀ-ն 1: 500 000 մասշտաբի քարտեզում-----2 միավոր
4. Ի՞նչ էք հասկանում համաշխարհային տնտեսության «ճյուղային կառուցվածք» և «տարածքային կառուցվածք» ասելով:-----1 միավոր
5. Գտե՛ք օրինաչափությունը և յուրաքանչյուր շարքից դուրս գրե՛ք ոչ տրամաբանական օբյեկտը-----1 միավոր
- ա) Իվանովո, Կրիվոյ Ռոզ, Լոձ, Մանչեստր
  - բ) Վերին Սիլեզիա, Լոթարինգիա, Էկիբաստուզ, Կանսկ-Աչինսկ
  - գ) Համբուրգ, Կալինինգրադ, Մարսել, Պրահա
  - դ) Ուրենգոյ, Սլոխտերեն, Տագովսկոյե, Մուչան

6. Ի՞նչ են «քաղաքակրթության մեծ գետերը»: Որո՞նք են դրանք: Ի՞նչ են «քաղաքակրթական տարածաշրջանները»: Թվարկե՛ք դրանցից ցանկացած 8-ը:-----3 միավոր
7. Ի՞նչ է գլոբալ տեղորոշման համակարգը: Ի՞նչ նպատակով է այն կիրառվում:-----2 միավոր
8. Որո՞նք են համաշխարհային օվկիանոսի ջրի մակարդակի տատանումների հիմնական պատճառները: Թվե՛ք դրանք և հիմնավորե՛ք:-----2 միավոր
9. Հաշվե՛ք Բաթումի և Երևան քաղաքների օդի ջերմաստիճանների տարբերությունը, եթե նույն պահին Երևանում մթնոլորտային ճնշումը 660 մմ է (պատասխանը հիմնավորե՛ք)-----2 միավոր
10. Միջավայրի բնածին և մարդածին աղտոտման ի՞նչ տեսակներ գիտե՛ք: Բերե՛ք օրինակներ-----2 միավոր
11. Ի՞նչ են աշխարհահամակարգերը: Թվարկե՛ք դրանց տեսակները և յուրաքանչյուրից բերե՛ք 1 –ական օրինակ-----2 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝



Ա.Թ. Գրիգորյան

**Պատասխաններ**  
**Աշխարհագրություն առարկայի 2020թ. դպրոցական օլիմպիադայի**  
**հանրապետական փուլի**  
**(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)**  
**11-12-րդ դասարաններ**

1. 1. ճիշտ է, 2. ճիշտ է, 3. սխալ է, 4. սխալ է, 5. ճիշտ է, 6. սխալ է

2. ա) Էմիգրացիան (արտագաղթ) ,մարդկանց տեղափոխությունն է տվյալ երկրից դեպի այլ երկիր  
բ) իմիգրացիան (ներգաղթ) մարդկանց տեղափոխությունն է այլ երկրից դեպի տվյալ երկիր  
գ) ռեէմիգրացիան (հետգաղթ) նախկինում այլ երկիր արտագաղթած բնակչության վերադարձն է տվյալ երկիր :

3. 1. Վրաստանի Հանրապետություն

69 700 կմ<sup>2</sup> 1:1 000 000 1 սմ=10 կմ 1 սմ<sup>2</sup>=100 կմ<sup>2</sup>/սմ<sup>2</sup> 69 700 կմ<sup>2</sup>: 100 կմ<sup>2</sup>/ սմ<sup>2</sup>= 697 սմ<sup>2</sup>

2. Հայաստանի Հանրապետություն

29 800 կմ<sup>2</sup> 1: 500 000 1 սմ=5 կմ 1 սմ<sup>2</sup>=25 կմ<sup>2</sup>/ սմ<sup>2</sup> 29 800 կմ<sup>2</sup>: 25 կմ<sup>2</sup>/ սմ<sup>2</sup>=1192 սմ<sup>2</sup>

4. Համաշխարհային տնտեսության «ճյուղային կառուցվածքը» փոխադարձաբար իրար հետ կապված արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, սպասարկման, գիտատեղեկության համակարգի, առևտրի, արտաքին տնտեսական կապերի և այլ ձևերի ամբողջությունն է:  
Համաշխարհային տնտեսության «տարածքային կառուցվածք» ասելով հասկացվում է համաշխարհային տնտեսության տարածքային միավորները՝ առանձին երկրներն ու տարածաշրջանները՝ յուրաքանչյուրն իր տնտեսությամբ:

5. ա)թեթև արդյունաբերության կենտրոններ-շարքից դուրս է Կրիվոյ Ռոզը (երկաթ)

բ) ածխավազաններ- շարքից դուրս է Լոթարինգիան (երկաթ)

գ) նավահանգիստներ- շարքից դուրս է Պրահան (ցամաքային քաղաք)

դ) գազի հանքավայրեր- շարքից դուրս է Սուչանը (ածխավազան)

6. ա) Մարդկության զարգացման պատմության սկզբում (հին դարերում ) գոյություն են ունեցել համեմատաբար զարգացած քաղաքակրթության օջախներ, որոնք գիտության մեջ հայտնի են «քաղաքակրթության մեծ գետեր» անունով: Դրանցից են Նեղոս, Տիգրիս, Եփրատ, Ինդոս, Գանգես, Հուանհե, Յանցզի գետերի հովիտները:

բ) Մարդկության զարգացման պատմության հաջորդ փուլերում նշված օջախներից շատերը զարգացել են, ընդգրկել նոր տարածքներ և կազմել «քաղաքակրթական տարածաշրջաններ»: Դրանք 12-ն են Արևմտյան Եվրոպա, Կենտրոնաարևելյան Եվրոպա, Ռուս-եվրասիական տարածաշրջան, Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա, Աֆրիկա (Մահարայից հարավ), Հարավային Ասիա, Արևելյան Ասիա, Հարավարևելյան Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա, Օվկիանիա:

7. Գոյքավ տեղորոշման համակարգն օգտագործվում է հեռագնման աշխատանքներում: Նրա ընդունիչ համակարգը մասնագիտացված համակարգիչ է, որը ռադիոազդանշանային կապով միացված է երկրագնդի շուրջ պտտվող 24 արբանյակների համակարգին: Արբանյակներից ստացված շուրջօրյա ճշգրիտ ազդանշաններով տեղանքում որոշվում է ցանկացած օբյեկտի աշխարհագրական կոորդինատները և բացարձակ բարձրությունը մինչև 10 մ ճշտությամբ:
8. Համաշխարհային օվկիանոսում ջրի մակարդակի տատանումները կարող են առաջանալ հիմնականում 2 պատճառով.
- ա) օվկիանոսի ջրի ծավալի փոփոխման պատճառով: Մառցապատումների ժամանակ օվկիանոսի մակարդակն իջնում է, իսկ հալքի ժամանակ՝ բարձրանում:
  - բ) Օվկիանոսի հատակի ռելիեֆի փոփոխությունների հետևանքով: Տեկտոնական հզոր շարժումների ժամանակ (երկրաշարժ, հրաբուխ, լեռնագոյացում) օվկիանոսի հատակն աստիճանաբար կարող է բարձրանալ կամ իջնել: Կամ օվկիանոսի հատակում ցամաքից տեղափոխված նստվածքների և օրգանական աշխարհի մահացումից (բույսեր, կենդանիներ) օվկիանոսի հատակը կարող է բարձրանալ և առաջացնել ջրի մակարդակի բարձրացում:
9. Բաթումին գտնվում է Սև ծովի ափին, որտեղ մթնոլորտային ճնշումը 760 մմ է: Հետևաբար քաղաքների ճնշումների տարբերությունը կլինի 760 մմ-660 մմ=100մմ, իսկ բարձրությունների տարբերությունը՝ 1000 մետր: Հետևաբար Բաթումիի և Երևանի միջև ջերմաստիճանների տարբերությունը կլինի 5- 6°C (կամ 5,5° C):
10. ա) Բնածին աղտոտման տեսակներից են.  
Երկրաշարժեր, հրաբուխներ, բնական անտառային հրդեհներ, հեղեղներ, փոշու և ձյան փոթորիկներ, ապարների հողմահարում և այլն:
- բ) Մարդածին աղտոտման տեսակներից են.
- ֆիզիկական կամ մեխանիկական (էլեկտրական դաշտ, աղմուկ, վիբրացիա, փոշի, ջերմություն, կենցաղային թափոն, օդակախույթ և այլն),
  - կենսաբանական (սունկ, բակտերիա, կապտականաչ ջրիմուռ և այլն),
  - քիմիական (թթու, հիմք, պլաստմասսա, էմուլսիա, ծծմբի երկօքսիդ և այլն):
11. Երկրի մակերևույթի բնական և հասարակական բաղադրիչները ու դրանց փոխազդեցության հետևանքով առաջացած տարածական համակարգերը կոչվում են աշխարհահամակարգեր (գեոհամակարգեր): Դրանք լինում են 3 տեսակ.
1. Բնական (բնական զոնա, բնական լանդշաֆտ)
  2. Հասարակական (տնտեսական շրջան, քաղաք, գյուղ)
  3. Բնահասարակական (ջրամբար, այգի, մարդածին լանդշաֆտ)